# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՊԱՐԻՍԻ

Վերջին տարիներս զանազան երկիրներու մէջ և զանազան անձերու կամ մատենադարաններու յատուկ հայերէն ձեռագրաց քանի մը ցուցակներ հրատարակուեցան, որոնց ամէնն ալ սիրով ողջունուեցան բանասէրներու կողմանէ: Ասոնց մէջէն ամէնէն մեծ տեղը բռնողն եղաւ վեր. Հ. Յակովբոս վ. Տաշեանի կոթողային աշխատութիւնը, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», որուն հետևողութեամբ ձեռնարկեցինք մենք ալ այս հրատարակութեան:

Հ. Տաշեան իր յիշեալ գործին մէջ իրաւամբ կ'ըսէ՝ թէ «հայ մատենագրութեամբ և անոր պատմութեամբ ըզբաղողին համար անհրաժեշտ է մեծ հաւաքմանց վրայ լիուլի տեղեկութիւն ունենալ: Հայոց մատենագրութեան ճշգրիտ պատմութիւն մը անհնար է գրել այնպէս, ինչպէս կը պահանջէ այսօր գիտութիւնն, եթէ լոյս չտեսնուի ... մեծ հաւաքմանց գանձերուն վրայ»: (էջ Բ):

Այս «մեծ հաւաքմանց գանձերէն» մէկն ալ՝ Պարիսի Bibliothèque nationale-ին մէջ պահուած 267 հատոր հա-

յետէն ընտիր և հազուագիւտ գրչագիրներն են, որոնց ընդարձակ ցուցակը թէև այլ և այլ ժամանակ և այլ և այլ գիտնականներու կողմէ կազմուեցաւ, սակայն անոնց այդ աշխատութիւնը ցարդ լոյս տեսած չըլլալով՝ Բա-նասէրը յանձն կ'առնէ այդ պաշտօնը կատարել:

*
* *

## 1.

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Arm. Supplément n° 64. — ԺԲ — ԺԳ դար:

Թուղթք՝ 10: — Մեծութիւն՝ 18,5 × 13: — Գրութեան մասն 14,5 × 9: — Տողք՝ 17: — Թերթք՝ գիրքին առջէն հատակոտոր մ՚ըլլալուն թերթահամարք ալ չկան: — Կազմ՝ կարմիր կաշի: — Մագաղաթեայ պահպանակ՝ չկայ: — Նիւթ՝ մագաղաթ բարակ և կարծր (խոտոր): — Հանգամանք՝ շատ թուղթ ինկած և միայն 10 հատ մնացած: — Գիր՝ միջին երկաթագիր: — Զարդագիրք՝ չկան: — Խորագիրք՝ միջին երկաթագիր մանր, այլ ոչ զարդարուն: — Սկզբնագիրք՝ սև, բայց տեղ մը երկու տող կարմրով (թղ. 4ա), և տեղ մը ոսկեով (թղ. 3ա) ամբողջ տողն: — Խորանք՝ չկան: — Կիսախորանք՝ կապոյտ, կանաչ, դեղին, կարմիր գոյներով անյաջող գծուած մը կայ ի թղ. 3ա: — Լուսանցազարդք՝ կարմիր, կանաչ և դեղին գոյներով, անճաշակ: — Նկարք՝ չկան: — Ժամանակ՝ անյայտ, բայց ԺԲ–ԺԳ դարէն: — Գրիչ, Տեղի և Տէր՝ անծանօթ: — Յիշատակագրութիւնք՝ չկան:

Մատեանս է Աստուածաշունչ, այլ կը պակսին առջին մասերն ալ. միայն Եսայեայ մարգարէութենէն մէկ երկու կիսկատար գլուխներ

Ջնջուած են։ Այսպէս՝ ձեռագիրը կը սկսի (թղ. 1ա) Եսայեայ Գլ. ԺԴ, համ. 11՝ «փառք քո։ և բազում ուրախութիւնն քո ,...» բառե-րէն, և կը վերջանայ (թղ. 6բ) Գլ. ԺՁ, համ. 9՝ «վասն այգւոյն Լոբեց (պակաս) ինչև զշաւիղն յաջերս զայգիս» բառերով։ Յետոյ (թղ. 7ա) նորէն կը սկսի նոյնին Գլ. ԻԱ, համ. 9՝ «և ամենայն պատկերք նորա, և ձեռագործք իւր կործանեցան յերկիր (պակաս)» խօսքէն, մինչև Գլ. ԻԲ, համ. 23՝ «և կացուցից զնա իշխան ի հաստատուն տեղւոջ։ և եղիցի (պակաս) յաթոռ փառ[աց]», որով կը վերջանայ ձեռագիրն (թղ. 10բ).

## 2.

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Ancien fonds nº 1. — ԺԴ — ԺԵ դար։

Թուղթք՝ 197։— Մեծութիւն՝ 25×17։— Գրութիւն՝ միասիւն 18×12։— Տողք՝ 19։— Թերթք՝ 16, իւրաքանչիւրը 11, 12 և 13 թուղթ։— Նիւթ՝ թուղթ ողորկեալ և դեղնագոյն։— Կազմ՝ փայտեայ կաշեպատ, վրան զարդերով։— Մագաղաթեայ պահպանակ՝ չկայ։— Հանգա-մանք՝ թղ. 1-2 և 196-197 ցեցակեր. նոր ձեռք մը՝ հաւանականաբար վերջին կազմողը՝ լուսանցքներու և այլ տեղերու փտած ու պատռած մասերը նորոգած է. քանի մը տեղ ալ ինկած թղթերու տեղերը նորէն գրուած ու թերթին լրացուած, այսպէս՝ թղ. 11, 21, 45, 72, 95, իսկ 193 թղթէն սկսեալ մինչև վերջը (թղ. 197) բոլորովին ինկած՝ բայց լրացուած նոյնպէս յետոյին կազմողին գրչովը։ Գլուխներու, կանոնա-գլխոց և գուբղայից բաժանումները նշանակուած են նաև եւրոպա-ցի մը, արաբական թուանշաններով, և տպագրին հետ համեմա-տելով՝ տարբերութիւնք տեղ տեղ նշանակուած են լուսանցքին վրայ

երեսէն « in impresso » խօսքն աւելցնելով ։ Բոլոր նորագոյն ձեռք մըն ալ՝ անցման գրով աղօթքէ հատուածներ աւելցուցած է մէկ երկու տեղ ։ — Գիր՝ մանրագիր երկաթագիր խառն ։ Զարդագիրք՝ կարմրու, տեղ տեղ կապոյտ գոյնով միացած, թռչնակերպ յաճախ ․ սովորական թռչնագիր են ։ — Խորագիրք և սկզբնատառք Հաստատածոյ՝ կարմրագիր են ․ իսկ սկզբնագիրք տանց՝ տառն ընդ մէջ կարմրով, բայց յետոյ կազմողին գրչին եղած ճանկերուն մէջ՝ կապոյտ գիծեր ալ կան ․ տեղ մըն ալ (թղ. 50բ) դեղին գոյն մը կ'երևայ ։ — Խորանք՝ հատ մը միայն գրքին սկիզբը, թղ. 1ա ։ — Կիսախորանք՝ կարմիր և կապոյտ գոյներով իւրաքանչիւր կանոնագլխոյ սկիզբն, թղ. 22ա, 46ա, 73ա, 96ա, 123ա, 145բ և 167ա ։ — Լուսանցազարդք՝ շատ տեղեր կան ․ թղ. 12բ կաթողիկէի զանգակատուն մը նըկարուած է, իսկ թղ. 69ա սուրբի մը պատկերն, թերևս Մովսէսի ․ թղ. 93բ սրբուհի մը, որ ձեռքը թուղթ մը կը բռնէ և որուն վրան գրուած է՝ « Հաստատեցաւ », ձիգը պարզ սկսող աղօթքին քովը — « Աղաւթք Աննայի », ուստի թերևս Աննայի պատկերն ըլլայ ։ Այս երկու պատկերներն ալ բիւզանդական ոճով նկարուած են ։ — Թուական՝ թղ. 197բ ։ — Ժամանակ՝ ԺԴ. — ԺԵ դար ։ — Գրիչ՝ Ներսէս Երէց ։ — Կազմող՝ Աստուածատուր եպիսկոպոս ։ — Տեղի և Տէր՝ անյայտ ։ — Յիշատակարանութիւնք՝ թղ. 71բ, 94բ, 95բ, 117բ ․ նաև՝ թղ. 197բ « Bibliothecae Regi » . — Տեղեկութիւնք՝ սկիզբը գտնուող թղթոյ ցեցակեր պահպանակին վրայ գրուած է « 6 . Piast . » որ կը նշանակէ թէ 6 ղրուշի գնուած է գիրքն ։

Մասնաւոր է Սաղմոսարան, որուն իւրաքանչիւր կանոնագլխոյն վերջը Գիշերային ժամու վերջին չեպին մաղթանքները, քարոզներն և աղօթքները կան ․ և կանոնագլուխք բաժնուած են գուեղայից ։

Գիւքը կը սկսի՝ «Երանեալ է »Ծ Թղ. 1ա, և կը վերջանայ՝ Թղ. 187բ Հինք Սաղմոսի, ուր կը սկսի՝ «Այս սաղմոս ինքնագիր Դաւթի է արտաքոյ թուոց ի ժամանակի զի եղ նա նահատակ ընդդէմ Գողիաթու. Առաջի Սաւուղայ:» Ցետոյ՝ Թղ. 187բ. «Աղաւթք Մանասէի: Տր ամենակալ»: Թղ. 188բ. «Զաքարիա հաւրն յովհաննու: Աւրհնեալ տր ած իղի »:

Յիշատակագրութիւնք: 1. Թղ. 71բ. ստորագրին բուն գրչէն. «Զմեղաւոր հոգս զՆերսէս երեցս յիշէ:»

2. Թղ. 94բ. դարձեալ բուն գրչէն. «Զգրող սորա զՆերսէս երեցս աղաչեմ յիշել ի տր և ած զձեզ յիշեսցէ:»

3. Թղ. 117բ. դարձեալ նոյնէն. «Զմեղաւոր հոգս զգծողս յիշեցէք ի տր աղաչեմ»:

4. Թղ. 95բ. տարբեր գրչով. «Արդ աղաչեմք զամենեսեան զիմաստուն ուսումն սէր տաճարիս զհայրենիքն և զքահանայքդ յորժամ զսոյն երգէք. զստացօղս մեղաւորս կոյսին գրիգոր. զՏարոնցի մեծ դպիր Եղիան յիշեցէք առ քս. և դուք յիշել լինիք. ի թվկն ռլե. (=1586) կրկին. նորոգեցաւ. ողորմեսցի այ:»

5. Թղ. 196բ. խեղծ գրով մը. «Աղղամըն շարայսին գծր. աչ բաղրըմ եարմւսին գծր. բան սանեան եար օմանեամ տար պաշըն չարմւսին գծր:»

6. Թղ. 190ա. («Արդ արձակես տր զծառայս քո ըստ բանի քում ի խաղաղութիւն» համառածին՝ «տր զծ...» տառերուն վրայ գրուած է) «Simēon», այսպէս ստորագծեալ:

(Շարունակելի). Կ. Յ. Բ.